Закрытое акционерное общество
«Газпром Армения»
(ЗАО «Газпром Армения»)

Учреждение «Учебно-спортивный комплекс»

«Գազպրոմ Արմենիա»
փակ բաժնետիրական ընկերություն
(«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ)

«Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկ

ПРИКАЗ
ՀՐԱՄԱՆ

«01» սեպտեմբերի 2025թ.

№ 953-Ա

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՀԻՄՆԱՐԿԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՀԻՄՆԱՐԿԻ ՏՆՕՐԵՆԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 314-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության 2019 թվականի հունիսի 14-ի N 59 հրամանի 8-րդ կետի 3-րդ ենթակետով և «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի կանոնադրության 72-րդ կետի 7-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի մանկապարտեզի գործունեության կարգը՝ համաձայն հավելվածի:
2. «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի մանկապարտեզի դաստիարակչական աշխատանքների պատասխանատու Ա. Խաչատրյանին՝ ապահովել սույն հրամանի կատարման կազմակերպումը:
3. «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի տնօրենի՝ ուսումնական և դաստիարակչական աշխատանքների գծով տեղակալ Ե. Ամիրխանյանին՝ ապահովել սույն հրամանի նկատմամբ հսկողությունը:
4. Ուժը կորցրած ճանաչել «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի տնօրենի 2019 թվականի սեպտեմբերի 24-ի N 314-Ա հրամանը:

ՏՆՕՐԵՆ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
«Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի տնօրենի
2025 թվականի սեպտեմբերի 1-ի 953-Ա հրամանի

ԿԱՐԳ
«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՀԻՄՆԱՐԿԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) կարգավորվում են «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի (այսուհետ՝ Հիմնարկ) մանկապարտեզի (այսուհետ՝ Մանկապարտեզ) գործունեության հետ կապված հարաբերությունները:

2. Մանկապարտեզն իր գործունությունը կազմակերպում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, այլ իրավական ակտերի, Հիմնարկի կանոնադրության և Կարգին համապատասխան՝ ապահովելով նախադպրոցական համապատասխան կրթական ծրագրերի պատշաճ իրականացումը և (կամ) նախադպրոցական ծառայությունների որակյալ մատուցումը:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված լրացուցիչ պայմաններն ու պահանջները, այդ թվում՝ տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ դեպքերում գործող կանոնակարգումները, պարտադիր են Հիմնարկի, Մանկապարտեզի և սանի ծնողի (օրինական ներկայացուցչի) և (կամ) վերջինիս կողմից լիազորված (վստահված) անձի (այսուհետ՝ Ծնող) համար:

II. ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵԺԻՄԸ

3. Մանկապարտեզում սահմանվում է հետևյալ աշխատանքային ռեժիմը՝

1) մանկապարտեզում կրթական ծրագրերի իրականացումը և (կամ) նախադպրոցական ծառայությունների մատուցումը (այսուհետ՝ Ուսումնադաստիարակչական գործընթաց) կազմակերպվում է ուսումնական տարվա ընթացքում (սեպտեմբերի 1-ից օգոստոսի 31-ը), բացառությամբ՝ օգոստոս ամսվա առաջին 10 (տասը) աշխատանքային օրը, շաբաթական հինգ օր տևողությամբ.

2) ոչ աշխատանքային օրեր՝ շաբաթ և կիրակի, Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի ոչ աշխատանքային օրերը.

3) սաներին պահելու առավելագույն տևողությունը՝ 10 (տասը) ժամ, սկիզբը՝ 08:30, ավարտը՝ 18:30:

4. Ուսումնադաստիարակչական գործընթացը սկսվում է ժամը 09:00-ից: Ուշանալու դեպքում Ծնողը պարտավոր է նախապես տեղեկացնել Մանկապարտեզի համապատասխան խմբի դաստիարակին:

5. Մանկապարտեզի տարիքային խմբերը ձևավորվում և համալրվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Տարիքային խմբերում սաների առավելագույն թիվը կարող է լինել՝

1) կրտսեր առաջին խումբ (2-3 տարեկան)՝ 20 սան,

2) կրտսեր երկրորդ (3-4 տարեկան), միջին (4-5 տարեկան) և ավագ խմբեր (5-6 տարեկան)՝ 26-ական սան:

Անհրաժեշտության դեպքում խմբերը կարող են սահմանված կարգով միացվել՝ ամառային արձակուրդներին խմբերում սաների թվի կրճատմամբ պայմանավորված:

6. Սանի այցելությունը Մանկապարտեզ կարող է ժամանակավորապես դադարեցվել հետևյալ դեպքերում՝

1) շինարարական, մոնտաժային կամ վերանորոգման աշխատանքներ իրականացնելիս,

2) ինֆեկցիոն կամ այլ հիվանդություններով պայմանավորված կարանտին հայտարարելիս.

3) օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված այլ դեպքերում:

III. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

7. Ուսումնադաստիարակչական գործընթացը Մանկապարտեզում իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան՝ նախադպրոցական կրթության պետական չափորոշիչով և նախադպրոցական կրթական ծրագրով, այդ թվում՝ այլընտրանքային հեղինակային (այսուհետ՝ Ծրագիր)՝ հաշվի առնելով սանի տարիքային, ֆիզիկական և հոգեբանական առանձնահատկությունները:

8. Ծրագրի հիմքում ընկած են՝ քնի (հանգստի), սննդի, հիգիենայի, սպորտի և առողջության պահպանման կանոնները, կրթական գործունեությունը, զբոսանքները և սանի ինքնուրույն գործունեությունը:

9. Մանկապարտեզի ամենօրյա գործունեության դասացուցակը կազմվում և իրականացվում է նախադպրոցական կրթության պետական չափորոշիչով և Ծրագրի հիման վրա:

10. Ծրագրի կրթական բաղադրիչի (յուրաքանչյուր դասի) տևողությունը սահմանվում է՝

1) կրտսեր առաջին խումբ՝ 10-15 րոպե.

2) կրտսեր երկրորդ խումբ՝ 20 րոպե.

3) միջին խումբ՝ 25 րոպե.

4) ավագ խումբ՝ 30 րոպե:

11. Կրթական գործունեության համար հատկացված ժամերի միջև սանի հանգստի տևողությունը կազմում է 5 րոպե:

IV. ՍԱՆԵՐԻ ՀԱՃԱԽԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

12. Ծնողը պետք է սանին Մանկապարտեզ բերի նախքան Ուսումնադաստիարակչական գործընթացը սկսվելը՝ ժամը 09:00-ն, և վերցնի Մանկապարտեզից ոչ ուշ, քան 18:30-ը՝ հաշվի առնելով սանի խմբի դասացուցակը, բացառությամբ՝ Հիմնարկի և Ծնողի միջև կնքված նախադպրոցական կրթական ծառայությունների մատուցման մասին պայմանագրով նախատեսված դեպքերի:

13. Սանի անվտանգությունն ապահովելու համար Ծնողը պետք է Սանին անձամբ մոտեցնի խմբի դաստիարակին (կամ վերջինիս օգնականին) և նույն կերպ

վերցնի Մանկապարտեզից: Ծնողին արգելվում է առանց ուղեկցության Սանին ուղարկել Մանկապարտեզ:

14. Այն դեպքում, երբ սանին Մանկապարտեզից վերցնելու է Ծնողից բացի այլ անձ, ապա Մանկապարտեզի դաստիարակչական աշխատանքների պատասխանատուն պետք է նախապես տեղեկացված լինի այդ մասին: Խմբի դաստիարակը կամ նրա օգնականն իրավունք ունի սանին հանձնելու միայն այն անձին, որի հետ Ծնողը նախապես ծանոթացրել է դաստիարակին: Սույն կետում նշված դեպքում Ծնողի կողմից նախապես, իսկ այլ անձի կողմից՝ առնվազն Սանին Մանկապարտեզից վերցնելու պահին, պետք է դաստիարակին տրամադրված լինի տվյալ անձին (անձանց) տրված համապատասխան լիազորագիր, որում պարտադիր պետք է նշվեն՝

1) Ծնողի անուն, ազգանունը.
2) սանի անուն, ազգանունը.
3) սանին Մանկապարտեզից վերցնելու իրավունք ունեցող անձի անուն, ազգանունը և անձնագրի տվյալները.
4) լիազորագրի տրման և գործողության ժամկետները:

Լիազորագիրը ստորագրվում է Ծնողի կողմից և դրան կցվում լիազորված անձի անձնագրի պատճենը:

Արգելվում է սանին վստահել որևէ այլ անձի:

15. Ծնողը Մանկապարտեզի աշխատանքների ավարտից հետո սանին պետք է դիմավորի Մանկապարտեզի նախասրահում:

16. Մինչև 18:30-ը երեխային Մանկապարտեզից վերցնելու անհնարինության դեպքում Ծնողը պետք է դրա մասին անհապաղ տեղեկացնի խմբի դաստիարակին:

17. Ծնողը սանի բացակայության մասին պետք է նախապես տեղեկացնի խմբի դաստիարակին:

18. Սանի համար բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ ապահովելու համար Ծնողը և դաստիարակը առավոտյան՝ ընդունելության կամ երեկոյան՝ հրաժեշտի ժամանակ կարող են փոխանակվել սանին առնչվող համապատասխան տեղեկատվությամբ:

V. ՍԱՆԻ ՀԱԳՈՒՍՏԸ

19. Սանը պետք է Մանկապարտեզ հաճախի մաքուր հագուստով:

20. Սանը պետք է ունենա փոխարինող կոշիկներ:

21. Սանը պետք է ունենա փոխնորդ հագուստ և խնամքի անձնական պարագաներ:

22. Ծնողը պետք է ապահովի խմբում գտնվող սանի անձնական իրերի դարակում սանին անհրաժեշտ փոխնորդ հագուստի և համապատասխան պարագաների մշտական առկայությունը:

23. Արգելվում է սանին Մանկապարտեզ բերել կոշիկներով, որոնք կարող են հետքեր թողնել հատակի վրա:

24. Դրսում ժամանակ անցկացնելու համար սանը պետք է կրի այնպիսի հագուստ, որը չի խանգարում նրա ակտիվ շարժմանը:

25. Հագուստը և կոշիկը պետք է համապատասխան լինեն եղանակային պայմաններին:

VI. ԲԱՑՕԹՅԱ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎԵԼԸ ԵՎ ԲԱՑՕԹՅԱ ԽԱՂԵՐԸ

26. Սաներն օրական 1-2 անգամ՝ մեկական ժամով՝ կախված եղանակային պայմաններից պետք է գտնվեն բացօթյա տարածքում:

27. Ձմռանը՝ -10°C և ցածր ջերմաստիճանի պայմաններում՝ միջին և ավագ խմբերի երեխաները, իսկ -5°C և ցածր ջերմաստիճանի դեպքում՝ կրտսեր խմբերի երեխաները բակում չեն լինում, կամ զբոսանքը կրճատվում է մինչև 20 րոպե (հաշվի առնելով նաև քամու արագությունը):

28. Սանի անվտանգությունն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով՝ Մանկապարտեզում անձնական հեծանիվների կամ անիվներով խաղերի օգտագործումը արգելվում է:

29. Սանին թույլատրվում է անձնական խաղալիքներ բերել Մանկապարտեզ, եթե դրանք մաքուր են և չեն պարունակում վտանգավոր փոքր մասեր: Թույլ տալով, որ սանը Մանկապարտեզ անձնական խաղալիք բերի՝ Ծնողը պետք է հաշվի առնի, որ մյուս սաները նույնպես կարող են խաղալ դրանով, կամ այն կարող է վնասվել: Սանի կողմից Մանկապարտեզ բերված խաղալիքների ապահովության համար դաստիարակը կամ Հիմնարկը պատասխանատվություն չեն կրում:

30. Արգելվում է Մանկապարատեզ բերել խաղալիքներ, որոնք կարող են վտանգավոր լինել կամ նպաստել ագրեսիվ խաղերի զարգացմանը: Հնարավոր վտանգից խուսափելու համար Ծնողը պետք է ստուգի սանի գրպանի պարունակությունը:

31. Եթե Ծնողը հայտնաբերել է, որ սանը տուն է բերել ոչ իրեն պատկանող, այդ թվում՝ Մանկապարտեզի խաղալիք, ապա նա պարտավոր է դրանք վերադարձնել ոչ ուշ, քան հաջորդ աշխատանքային օրը:

VII. ՍԱՆԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

32. Սանի Մանկապարտեզ ընդունվելու դեպքում Ծնողը պետք է ներկայացնի սանի առողջական վիճակի վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ: Ելնելով սանի առողջական վիճակից՝ Ծնողը գրավոր տեղեկացնում է Մանկապարտեզի դաստիարակչական աշխատանքների պատասխանատուին հատուկ պայմանների անհրաժեշտության մասին, ինչով պայմանավորված՝ աշխատակիցները համապատասխան ուշադրություն են դարձնում տվյալ սանին:

33. Արգելվում է Մանկապարտեզ ընդունել այն երեխաներին, որոնց առողջական վիճակը նախադպրոցական կրթություն կազմակերպելու ընթացքում կարող է վնաս պատճառել տվյալ երեխայի կամ այլ անձանց առողջությանը:

34. Առավոտյան Մանկապարտեզի բուժաշխատողը նախասրահում դիմավորում է սանին՝ առողջության հետ կապված խնդիրների վերհանման նպատակով: Հիվանդ կամ առողջության հետ կապված կասկածելի ախտանիշներով սանի մուտքը Մանկապարտեզ չի թույլատրվում:

35. Մանկապարտեզ սանի մուտքը կարող է սահմանափակվել առողջության հետ կապված հետևյալ ախտանիշներից որևէ մեկի առկայության դեպքում՝

1) աչքերի բորբոքում.
2) ցան.
3) քթից խիտ կամ ինտենսիվ արտահոսք.
4) ջերմություն.
5) լուծ.
6) փսխում.
7) հաճախակի հազ:

36. Մանկապարտեզում գտնվելու ընթացքում սանի հիվանդանալու, ինքնազգացողության վատթարացման և նմանատիպ այլ դեպքերում Մանկապարտեզի բուժաշխատողը պետք է անմիջապես կապ հաստատի Ծնողի հետ:

37. Մանկապարտեզում գտնվելու ժամանակ սանի մոտ հիվանդություն կամ վնասվածք առաջանալու դեպքում, Մանկապարտեզի բուժաշխատողը, անհրաժեշտության դեպքում, պետք է շտապօգնություն կանչի և կապ հաստատի Ծնողի հետ: Մինչ շտապօգնության կամ Ծնողի ժամանումը Մանկապարտեզի բուժաշխատողը վերահսկում է սանի վիճակը, իսկ անհրաժեշտության դեպքում ցուցաբերում նաև առաջին բուժօգնություն:

38. Մանկապարտեզի բուժաշխատողը կասկածելի ինֆեկցիոն կամ այլ հիվանդություն ունեցող սանին առանձնացնում է հիվանդասենյակում՝ Մանկապարտեզի համապատասխան աշխատակցի հսկողությամբ:

39. Մանկապարտեզում ճաշացանկը կազմվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան՝ սաներին առողջ սնունդով ապահովելու համար: Ծնողները իրազեկվում են ճաշացանկի մասին:

40. Արգելվում է Մանկապարտեզ բերել սնունդ և ըմպելիքներ, մաստակ:

41. Խմբի դաստիարակն իրավունք չունի սանին տալ Ծնողի կողմից բերված դեղամիջոցները կամ թույլ տալ սանին ինքնուրույն ընդունել դրանք: Այն դեպքերում, եթե սանն օրվա ընթացքում բուժման կարիք ունի, ապա Ծնողը պետք է բժշկի կողմից տրամադրված դեղատոմսը ներկայացնի Մանկապարտեզի խմբի դաստիարակին և բուժաշխատողներին:

42. Մանկապարտեզի աշխատողին չի թույլատրվում գտնվել Մանկապարտեզում և իրականացնել իր աշխատանքային պարտականությունները, եթե նրա առողջական վիճակը կարող է վնասել սաների կամ այլ աշխատողների առողջությանը:

VIII. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

43. Մանկապարտեզի աշխատակիցները պետք է հնարավորինս փորձեն ստեղծել առողջ ֆիզիկական և հոգեբանական միջավայր, որն ապահով է և տրամադրում է հնարավորություններ սաների ստեղծագործական, խաղային և կրթական գործողությունների և ֆիզիկական ակտիվության զարգացման համար:

44. Մանկապարտեզի խաղերի, կահույքի և սպորտային սարքավորումների կազմը, չափերը և մակերեսը պետք է համապատասխանեն սանի տարիքին, հասակին և անվտանգ լինեն կիրառության համար:

45. Սանի քնի կամ հանգստի ժամանակ Մանկապարտեզի առնվազն մեկ աշխատակից միշտ պետք է գտնվի սաների հետ:

46. Եթե զբոսանքի ժամանակ աշխատողներից մեկն ունի հիմնավորված պատճառ՝ որոշ սաների հետ վերադառնալու խումբ, ապա խմբի մեկ այլ աշխատակից պետք է երաշխավորի դրսում գտնվող սաների անվտանգությունը:

47. Յուրաքանչյուր անձ Մանկապարտեզ մուտք գործելիս կամ դուրս գալիս պետք է իր հետևից փակի Մանկապարտեզի դարպասը և (կամ) դուռը՝ սաների անվտանգությունն ապահովելու համար:

48. Մանկապարտեզի տարածքը փակ է տրանսպորտային միջոցների համար, բացառությամբ՝ համապատասխան թույլտվություն ունեցող տրանսպորտային միջոցների:

49. Մանկապարտեզի տարածքում արգելվում է այլ անձանց զբոսանքը, այդ թվում՝ Ծնողի: Սաների անվտանգությունից ելնելով՝ Ծնողը սանին վերցնելուց հետո պետք է հնարավորինս արագ դուրս գա Մանկապարտեզի տարածքից:

50. Արգելվում է Մանկապարտեզ բերել սուր, կտրող և ապակյա իրեր, ինչպես նաև փոքր առարկաներ (ուլունքներ, կոճակներ, մետաղադրամներ և այլն), հաբեր և այլ դեղամիջոցներ կամ վտանգավոր իրեր (առարկաներ):

51. Ծնողը և Մանկապարտեզի աշխատողները պետք է անհապաղ տեղեկացնեն Մանկապարտեզի դաստիարակչական աշխատանքների պատասխանատուին այն վտանգավոր իրավիճակների մասին, որոնք կարող են ֆիզիկական և հոգեկան ցավ պատճառել սաներին կամ աշխատողներին: Եթե Մանկապարտեզի աշխատողը նկատում է, որ Ծնողը անհետևողական է սանի դաստիարակության, առողջության ապահովման հարցում կամ ոտնահարում է սանի իրավունքները, ապա նա պարտավոր է այդ մասին տեղեկացնել Հիմնարկի տնօրենին՝ համապատասխան միջոցներ ձեռնարկելու նպատակով:

52. Սանի վերաբերյալ Ծնողից ստացված տեղեկատվության գաղտնիությունը երաշխավորվում է: Այն որեւէ նպատակով օգտագործելիս Մանկապարտեզը պարտավոր է հետևել «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին: Ծնողը կարող է համաձայնվել կամ չհամաձայնվել իր երեխայի լուսանկարների օգտագործմանը համացանցում, ալբոմում, Մանկապարտեզի հետ կապված այլ նպատակներով՝ այդ մասին նշելով ընդունելության դիմումի մեջ: Անձնական տվյալների մշակման հիմքում Ծնողի համաձայնությունն է:

53. Մանկապարտեզում գտնվելիս սանին արգելվում է կրել ոսկյա և արծաթյա զարդեր կամ Մանկապարտեզ բերել թանկարժեք խաղալիքներ, բջջային հեռախոսներ, ինչպես նաև զենք-խաղալիքներ: Թանկարժեք իրերի կորստի համար Հիմնարկը պատասխանատվություն չի կրում:

IX. ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔ

54. Մանկապարտեզը բաց է Ծնողի հետ համագործակցության հարցերում, որի արդյունքում կստեղծվեն սանի արագ հարմարվողականության համար բարենպաստ պայմաններ, և կապահովվի անվտանգ միջավայր նրա զարգացման համար: Ընդ որում, երեխայի՝ մանկապարտեզում հարմարվելու (ադապտացիայի) նպատակով սահմանվում է կրտսեր առաջին տարիքային խմբի համար՝ առավելագույնը 10 աշխատանքային օրյա այցելություն, իսկ մյուս տարիքային խմբերի համար՝ 5 աշխատանքային օրյա այցելություն:

55. Ծնողը մանկավարժական աջակցություն կարող է ստանալ Մանկապարտեզի համապատասխան աշխատակիցներից՝ սանի դաստիարակությանը վերաբերող բոլոր հարցերում:

56. Ելնելով սանի լավագույն շահից՝ Ծնողը կարող է ըստ անհրաժեշտության կապ հաստատել խմբի դաստիարակի հետ՝ փոխանակվելով համապատասխան տեղեկատվությամբ:

57. Այլ սաների պահվածքին վերաբերող հարցերը Ծնողը կարող է քննարկել միայն խմբի դաստիարակի հետ համատեղ: Ծնողին արգելվում է այլ սաների և նրանց Ծնողների հետ կապ հաստատել՝ հանդիմանություններով հանդես գալու և (կամ) պարզաբանումներ պահանջելու նպատակով:

58. Սաների միջև առաջացած վեճերը պետք է լուծվեն միայն դաստիարակների կողմից: Խնդրահարույց իրավիճակները պետք է լուծվեն սաների բացակայությամբ:

59. Սաների զարգացման վերաբերյալ կազմակերպված անհատական հանդիպումները անցկացվում են համակարգված ձևով՝ տարեկան առնվազն երկու անգամ՝ հիմնվելով ուսումնական ծրագրի շրջանակում տվյալ սանի ցուցաբերած արդյունքների վրա:

60. Ծնողների հետ համագործակցությամբ Մանկապարտեզում ստեղծվում է «Երեխայի զարգացման անհատական փաթեթ (պորտֆոլիո)», որն արտացոլում է սանի անձի ձևավորման ամենակարևոր փուլերը:

61. Մանկապարտեզի հետ կապված բողոքների, հարցերի և առաջարկությունների համար Ծնողները կարող են կապ հաստատել դաստիարակների կամ Մանկապարտեզի դաստիարակչական աշխատանքների պատասխանատուի հետ:

62. Կարգի պահանջների խախտումը Հիմնարկի Մանկապարտեզի աշխատակիցների համար առաջացնում է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով և այլ իրավական ակտերով նախատեսված պատասխանատվություն:

63. Կարգի պահանջների խախտումը կարող է հիմք հանդիսանալ Հիմնարկի և Մանկապարտեզի սանի Ծնողի միջև կնքված նախադպրոցական կրթական ծառայությունների մատուցման պայմանագիրը վաղաժամկետ լուծելու համար: